

≡ Ա Ւ Ո Ւ ≡

1.9. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1962

◀ Հոկտեմբեր ▶

Թիւ 10

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԼՈՅՍ ՀԱՒԱՏՔԸ

Տեսրակին հեղինակը Ս. Գրիգոր Լուսաւորիչը Հռովմ տանելէն և զերադանելէն յետոյ կը զրէ թէ ոչայոց Արքազան Լուսաւորիչը . . . Վաղարշապատու աթոռանիստ Եկեղեցւոյն մէջ ոտ հետեւալ Լատինադաւան խօսքերը ժողովրդեան ուղղեց. Հռովմայ Քահանայապետին ընդհանուր Քրիստոնեայ Եկեղեցիներուն վրայ ունեցած առաքելական գերազանց իշխանութիւնը քարոզեց, և այսպիսի դաւանանքի մը վրայ հիմնեց այն Սուրբ աթոռը . . ի մէջ քերած վկայութիւնը Ազտիմանզեղոսի մէջ գտնուած Ս. Գրիգորի ի Հռովմ ճանապարհորդութենէն վերջը ըսուած են. Ազաթանզեղոսի վրայ հետեղներ կը տեսնեն թէ Ս. Գրիգոր իւր վարդապետութեան ուսուցումը (մէկ կողմ կը ձգենք մտաենազրական ինդիքներ), ոկտած է 301 թուականին, Հռովմայ Կայսրութեան և Կոստանդիանոսի գարձէն 12 տարիներ տուած, և իւր զրութիւնն ու վարդապետութիւնը այդ տանեակ տարիներուն մէջ պէտք է պարփակել, յորս Հայք Ս. Լուսաւորչի վարդապետութեամբ լուսաւորուեցան և գօրացան, և 311 թուականին զզալի կերպով զայն ցուցին և պաշտպանեցին Մաքսենտիանոսի դէմ: Բաց աստի 312 թուականէն առաջ կարելի չէ Ս. Գրիգորը Հռովմ տանիլ, վասն զի մինչեւ այն ժամանակ դեռ Կոստանդիանոսի դարձը տեղի ունեցած չէր: Իսկ այդ թուականէն վերջն ալ անկարելի է, որովհետեւ Ս. Գրիգոր յոյժ ծերացեալ և տկարացեալ, հովուական գործերն իսկ իւր որդւոյն թողած, միայնակեացի մը նման կը սիրէր քարանձաւներու մէջ կեանքը անցնել: Այդ ստոյդ պարագաները զիւնալով կրնանք համարձակօրէն ըսել թէ հակառակ ենթադրութիւնը բոլորովին սխալ է, և պատմականօրէն կը հաստատուի թէ Լուսաւորիչն Հռովմ զնացած չէ:

Բայց և ոչ բան մը քարոզած է Հռովմայ Հայրապետներուն կարծեցեալ գերազանց իշխանութեան մասին, ինչպէս տետրակը հետեւալ բառերուն մէջ խորհած է տեսնել՝ Լատինադաւան վարդապետութիւն մը, և Որոց (աշակերտաց) առաջինն Պետրոս ասէ, թէ՝ Դու ես Արդի Աստուծոյ կենդանւայո վասն որոյ և գերանութիւնն ընկալաւ, ասէ, Երանի է քեզ, Պետրոս որդի Յովանոսու զի ո՞չ յերկրէ տահմակցաց քոց ի մարմնէ և յարնենէ Ազգի քո՝ ի մարդկանէ առել դու-

զայդ զիտութիւն, այլ Հայր ի յերկնից եղ ի սիրտս քո և յայտնեաց քեզ, եւ արար զնա վէմ հաստատութեան ամենայն Եկեղեցիցաց»:

Առաջին և ամենայն Եկեղեցիցաց բառերուն վրայ հիմու ելով կ'եղաւ կացնէ, թէ վէմը Պետրոսն է, թէ բոլոր Եկեղեցիք անոր վրայ շնուռած են, թէ Հայոց Եկեղեցին ալ անոր մէջ է, երբ Ա. Ետարանի այդ խօսքերը բացատ րեցինք պէտք եղածն ըսինք արդէն, տեսանք թէ Աւետարանական և Առաքե լական բացատրութեամբ հաւատոյ վէմը Քրիստոս է: Այսպէս Ս. Գրիգոր Լու սուրբիչն ալ կ'ըսէ թէ Պետրոսի գաւանութիւնը — Դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանւոյ — որ վիսի պէս հաստատուն է, եղաւ բոլոր Եկեղեցիներու հիմը, և այս միայն է Խուսաւորչի ճշմարիտ գաւանանքը: Զի եթէ Ս. Գրիգոր Հոռովէտաւաններու նման վարդապետէր, անշուշտ Պետրոսը միւս Առաքեալներէն աւելի բարձր պիտի ենթազրէր: Ըսդհակառակն՝ հետեւալ խօսքերը մեզ կր ցուցնեն թէ Ս. Գրիգոր Աւետարանի հետևողութեամբ վարդապետէրով բոլոր Առաքեալները համահաւասար իշխանութեան տէր կը նկատէ (Էջ 340): Եւ եղեն հիմունիկ Առամեալին և առին զնարհս Քահանայութեան և Մարգարէւութեան և Առաքելութեան երկնաւոր խորհրդոյն զիտութեան որ վարէր զայր յԱրքահամեան զաւակէն զոր ետ ցջէր ժառանգութեան աւանդապահն Յովհաննէս, և Տէր ետ Առամելոցն, զիականս արքայութեանն եւ ի ձեռու նոցա (Ա.Ամելոց): Վարդապետաւութեան ամբողջութեան մէջ շատ զեղեցիկ նկարազրուած է Առաքելոց պաշտօնն ու զործը, և Ս. Գրիգոր կը ներկայացնէ զանոնք հաւասար իշխանութեամբ և հաւասար զօրութեամբ, և (Էջ 356) յայտնապէս կ'ըսէ թէ հաստատուի վէմը Քրիստոսի համար ըսուած է: — «Զի ի վերայ լիմին հաւատութեան շինեսցէ դիտէ զրարձրութիւն հիմանց Եկեղեցւոյ»: Խսկ Յաճախապատումէ (Ժէ. Ճ'առ) ի մէջ բերուած կտորին իմաստը ճշգելու համար բաւական է մատնանիշ ընել նոյն Յաճախապատումի հետեւալ խօսքերը որոնք ունէ զրժուարութիւն շունին: Առո Պետրոս բանս ի Տեղանէ առ ամենայն վերակացու սուրբս տասցաւ, որք զնշմարտութիւնն իրաւ ունին» (Էջ 143): Այդ խօսքերը դիտմամբ մէկ կողմ ձզած է՝ որպէս զի ի վերև յիշուած խօսքերուն տայ ու զած իմաստը և բացատրութիւնը: Բայց խնդիրը պարզ է, Յաճախապատումի հեղինակը ոչ զՊետրոս ընդհանուր Եկեղեցւոյ լիմ կամ հիմն կ'ընդունի և ոչ ալ կապելու և արձակելու իշխանութիւն անոր տրուեցաւ կ'ըսէ, այլ կը զրէ չՃիրջմէն Պետրոսի ուղղուած խօսքերը բոլոր վերակացուներուն ըսուեցան, որոնք ճշմարտութիւնը ունին: Ակնյայտնի է ուրեմն որ վերոյիշեալ վկայութիւններուն տարբեր իմաստ տուողներ, իմաստները խեղաթիւրելով ժողովուրդը խարելու ձգտումներ կը ցուցնեն:

Ս. Գրիգոր Խուսաւորիչէն յետոյ տետրակը բոլոր չորրորդ և հինգերորդ դարերու նշանաւոր Հայրեն ալ Լատինադուան անուանել և ցուցնել կ'աշխատի, և կը զրէ: «Մեծն Ներսէս Հայրապետն ալ Լատինադուան էր, և թէ Ս. Բարսեղ Հայրապետին նախազահութեամբը Արքելեան Եպիսկոպոսներէ կեսարիա գումարուած ժողովին մէջ ան ալ խորհրդապետից եղաւ. և ստորազրեց սիւնհողոսական աղերսազիք մը, որ Ս. Դամասոսի Հռովմայ և օտար Եկեղեցւոյ Քահանայապետին և Արքեմտեան Եպիսկոպոսաց խրկուեցաւ՝ արևելեան կամ

Արիոսեան վէճերը իր իշխանութեամբը դադրեցնելու համար։ Պատմական խո-
չոր սուտեր են զորս կ'արտասանէ տետրակին գրողը, բոլորովին անտեղեակ
ընդհանուր եկեղեցւոյ և Ազգային Եկեղեցւոյ և նոյն իսկ Լատին Եկեղեցւոյ
պատմութեան։ Բարսղի զրած նամակը բարեբաղդաբար ունինք ձեռքերնիս, և
թղթոյն վերնազիրը կարդալով կը տեսնենք, որ ո՛չ թէ Հռովմայ Եպիսկոպոսին
ուղղուած է, այլ բոլոր Արևմտեան Եպիսկոպոսաց, ճիշդ այս բառերով։ «Ամե-
նաբարեապատ եւ ամենասուրբ եղբարց պատմօնակցաց յիշալիս եւ ի Գաղղիա
միաձայն Եպիսկոպոսաց»։ Ստորագրովները երեսուն երկու Եպիսկոպոսներ են,
Մելիսիոս, Եւսեբիոս, Բասիլիոս, Կինչ, առանց աթոռներու անուան, որոց մէջ
քանարորդ տեղը կը զրաւէ Ներսէս անունով Եպիսկոպոս մը։ Թէ՛ ժամանակը,
որ 372 տարիէ շատ վերջը պէտք է լինիլ, թէ՛ Ներսէսի մահուան թուականը՝
373ին, թէ՛ պարզապէս Ներսէս անուն մը՝ Հայոց Հայրապետ Մեծին Ներսէսի
հետ նոյնացնելու անհաւանտկանութիւնը բաւական են անարժէք ցուցնելու
իրեկ փաստ բերուած վկայութիւնը։ Նկատելի է նաև, թէ թղթոյն նպատակն է
պարզապէս հրաւիրել Արևմտեան աշխարհի Եպիսկոպոսները, որ իրենք ալ ար-
դելք հանդիսանան Արիանոսաց աղասիքոյն յառաջիազգացութեան դէմ։ Ա. Բարսղի
նամակին մէջ բնաւ Գամասոսի անունը չենք գտներ, և ո՛չ իսկ Հռովմայ ա-
նունը կայ անոր մէջ, այլ Խտալիոյ և Գաղղիոյ Եպիսկոպոսաց ուղղուած է։ Այդ
զրութեան մէջ Լատինադաւան գաղափար մ'իսկ չկայ, և Քրիստոնէական սէրն
է որ կը փայլի, և ոչ այլ ինչ։ Մեր Մեծն Ներսէսը զայն չէ ստորագրած հա-
ւանաբար, բայց եթէ ստորագրած իսկ ըլլայ, նախնական դարուց Եկեղեցեաց
միութեան ձեւ հաստատած կ'ըլլայ, գոր և մեք կը պաշտպանեմք։

Տեարակին հեղինակը կը կարծէ, թէ իր կարծեաց պաշտպան հանդիսա-
ցող է նաև Ս. Սահակ Հայրապետն, զոր Լատինադաւան կ'անուանէ և քանի մը
խօսքերը կը յիշէ կանոնազրէն առնելով, «Հաւատուիլ օինեալ զազդ մարդկան
ի վերայ վիմին հաստատութեան . . . Քանզի նոյն ինքն կենարարն ուսուցանէ
ասելով ցԿետրոս, Դու ես զէմ և ի վերայ այդր վիմի շինեցից զԵկեղեցի իմ,
և դրունք գժոխոց մի յազթահարեսցեն։ Արդ զի՞նչ իմանայցեն զասեն ցԿետ-
րոս՝ զէմ, միթէ որպէս զմի ոք ի քարա՞նց, քա՞ւ լիցի, այլ մարդ բանաւոր
զուխ առաքելական գասուն, և թէ անդրդուելի հաւատառ խոստովանեաց ըՊ-
Քրիստոս Արդի Աստուծոյ, երանութիւն ընկալաւ, և զէմ անուանեցաւ։ Ապա
ուրեմն շինեալքն ի վերայ նորա չեն քարինք, այլ մարդիկ նորին հաւատոյ հա-
սութեակիցք»։ Այդ կանոնէն կը հասկնանք թէ Ս. Սահակի ատեն ոմանք Եկե-
ղորդակիցք։ Այդ կանոնէն կը հասկնանք թէ Ս. Սահակի ատեն ոմանք Եկե-
ղեցւոյ և Վանքի մէջ տարբերութիւններ զրած են — և ինարծեցին տղիտութեամբ
այլ զոմն Եկեղեցի ասել և այլ զոմն Վանսա — և իրենց ախմար խօսքերով կոիր
և հերձուած ուղեցին մուծանել ոի միաբանութիւն հաւատոյ։ Ս. Սահակ անոնց
դէմ կը զրէ և կը ցուցնէ, թէ վայրն ու քարը չէ Եկեղեցին, այլ հաւատացեալ
ժողովուրդը։ Առաքելոյն խօսքը յիշելով «Մի է Տէր, մի հաւատ, և մի մկր-
տողովուրդը։ Առաքելոյն վիտական գիտութեան Աստուծոյ։ Կետրոսի դաւա-
չին զմեզ ի միաբանութիւն գիտութեան Արդույն Աստուծոյ։ Կետրոսի դաւա-
չին զմեզ արիանութիւն գիտութեան վիտական գիտին (Քրիստոսի) վրայ
տութիւն», կը յաւելու թէ Եկեղեցին հաստատոն վիմին (Քրիստոսի) վրայ
շինուած ազգն է, ապա ուրեմն ճշմարիտ հաւատքն է Եկեղեցին որ զումարէ և
շինուած ազգն է, ապա ուրեմն ճշմարիտ հաւատքն է Եկեղեցին որ զումարէ և

ցին և ոչ փայտերու կամք քարերու վրայ Պետրոս նիւթական քար մը չէ, այլ մարդ բանաւոր որ Քրիստոսը Արդի Աստվածոյ խոսափանելուն համար երանութիւնը ընդունեց և վէմ անուանեցաւ Ապա ուրեմն կ'րսէ, անոր (հասաւատուն վիմին Քրիստոսի) վրայ շնուածները քարեր չեն, այլ անոր (Պետրոսի) հաւատոյ գոււանութիւնը ունեցող մարդիկ Ս. Հայրապետին տուած բացատրութիւնը շտո պարզ է և շատ հեռու Հոռվմէ ադոււան զրութենէն Վերջին բառերէն յեւ տոյ կան հետեւալ տողերը, զորս տեսարակը չէ ուզած յիշել ։ «Քանիզի ո՛չ դանդաղին զիրք՝ սովին անուամբ ձայնել զՃէրն մեր և զՓրկիչ ։ այսինքն թէ հաւատոյ վէմ անունով կ'իմացուի Քրիստոս, ինչպէս վերի խօսքերը ցոյց կու տան, որուն վրայ Եկեղեցին կամ հաւատացեալը պիտի հաստատուի Ասկէ զատ Ս. Սահակ Եկեղեցին նաւու մը կը նմանցնէ, նաւապետը կամ զլուին ինքն Քրիստոս է, կ'ըսէ, իսկ Առաքեալները անոր նաւապարներն են ։ Ծեսանես զյարմարումն և զրարձրութիւն Եկեղեցւոյ, զուրբը և զամբիծ հաւատն ասեմ, որոյ Առաքեալք, Մարդարէք և Վարդապետք են նաւագարք, ունելով նաւապետ զմարմնացեալ Բանն Աստուածաւ ։ Դեռ կան Ս. Սահակայ կանոններուն և նամակաց ուրիշ յայտնի բացատրութիւններ ալ, որ նոյն իմտատը կը յայտնեն, այլ տւելորդ կը համարիմք զանոնք մի առ մի յառաջ բերել ։

Նոյն տեսրին հեղինակը Ս. Սահակէն յետոյ Ս. Մեսրոպը և Ս. Թարդիմանիշներուն խումբն ալ կ'ուզէ Լատինադաւան ընել, այլ ամենուն համար վկայութիւններ չունի, և առաջ Եզնիկի և Խորենացիի անունները կը յիշէ ու կ'ըսէ ։ ռենա Եզնիկ Կողբացին որ Պօղոս Առաքեալին բերնովը կը խօսի ։ — Աչ զի ես միայն արժանի եղէ խորդոյն, որ տրուան եմ Առաքելոց, այլ թէն Պետրոս որ զլուին է Առաքելոց, չկարէ ճառել ։ ։ Պլուխ Առաքելոց բառերը կը բաւեն հետուցնելու համար թէ՝ Եզնիկ Պապական զիխաւորութիւնը կ'ընդունէր ։ Սակայն Եկեղեցական Հարց գրուածոց մէջ այսպիսի բառերու և կոչումներու ստէպ կը հոնդիպինք, որոնք բոլոր Առաքեալներուն համար զրեթէ ըսուած են, իսկ Առաջին եւ Գլուխ առաքելական դասուն բացատրութիւններ Պետրոսի համար կը զործածուին, տաններկու Առաքելոց մէջ մէկ թիւը կազմելուն համար, ինչպէս երկրորդ թիւը իշխանութեան տարրերութիւն չի բերեր ։ Կողբացին Եզնիկ Պետրոսը միւս Առաքելոց ընկեր կը նկատէ, և ո՛չ թէ Առաքեալներէն վեր ՊԵՏ կամ Առաքելոց վրայ ԳԼՈՒԽ ։ «Թէպէտ և (Պօղոս) կ'ըսէ, Առաքեալ և անօթ ընտրութեան էր, սակայն էր ընկեր Պետրոսի, լծակից Որդեւոցն Արուաման և քարոզակից Բառնաբայ» եալլու ։

Խորենացիէն ալ յառաջ կը բերէ սա խօսքերը իրը Պետրոսի բերնէ ըսուած ։ «Քանիզի ահա նկար օրինակ մեծ բարւոյն անսխալ հաւատոյն և յառաջացեալս ի Ցեառնէ վէմ ։ ։ ։ Խորենացւոյ անունով ի մէջ բերուած այս խօսքը Պիտոյից կոչուած զիրքէն է (Ը. զրոց բարառնութեան սահմանէն)։ Այդ բարառնութեան օրինակին վերնազիրն է, «Զի՞նչպիսի բանս ասասցէ Պետրոս զինի ուրանալոյն գծէրն», որուն մէջ կը տեսնենք որ Պետրոս Առաքեալը կ'արտաստէ իր ուրացութեան վրայ և մի առ մի կը թուէ այն բարիիքները՝ զորս միւս Առաքելոց հետ վայելած էր Քրիստոսէ, և որոնցմէ ուրացութեանմբ զրկուած էր ։ կը փափաքի հասնիլ յառաջին ծայր կատարելութեան, ըսել է որ կորսնցու-

յած էր ունեցածը, մինչ իւր ընկեր Առաքեալները կը պահէին զայնս, ամէնքը ընդունեցին հոգին, ամէնքը եղան փակակալ՝ կապելու և արձակելու իշխանոււ թիւն առնելով, ամէնքը եղան հրմունք։ Պէտք չէ մոռնալ որ Պիտոյից գիրքը հարտասանական ձևերու օրինակներ են, և Խորենացին ալ չեն, և անոնցմէ Խորենացոյն հաւաքը փնտուել անտեղի ենթադրութիւն է։ Խոկ տեարակը յառաջ բերած օրինակներէն վերջ կը գրէ. և Այս պատճառաւ է որ Լատինագաւանն Խորենացին իր Հայոց պատմութեանը մէջ Նիկեոյ, Կոստանդնուպոլսոյ և Եփեսոսի ընդհանուր ժողովները յիշատակած ատեն, միշտ կամ Հռովմայ Քահանայապետաց անունը և կամ անոր անունով եկող Խուրակին անունը ամէն Եպիսկոպոսներէ և Պատրիարքներէ յաւաչ, իրեւ նոյն ժողովներուն մէջ զահերէցներու անունը կը յիշէ։ Բայց Խորենացին միայն ժողովական նշանաւոր աթոռներու Եպիսկոպոսներու անունները կը յիշէ. և այդ երեք տիեզերական Ս. ժողովոց համառօտակի յիշատակութեան մէջ Հռովմայ Եպիսկոպոսին Գահերէց անունը չի տար. և ոչ երբեք կը գրէ թէ Հռովմայ Եպիսկոպոսը նախազանեց Ս. ժողովներուն Նիկեոյ տիեզերական Ս. ժողովոյն նախազանն էր Կոստանդիանոս կայսրը (Տես՝ Առկրատ, Եկեղ. պատմ., Գիրք Ա., Գլ. Ը.). Խոկ Եպիսկոպոսները բազմած էին իրենց աթոռներուն կարգավը. Հռովմայ նախաթոռութիւնը յիշուած չէ. Կոստանդնուպոլսոյ Ա. ժողովոյն մէջ նշանաւոր Եպիսկոպոսներ կը յիշուին՝ Տիմոթէոս Աղեքսանդրիոյ, Գրիգոր Նազիանզացի և Նեկտարիոս Կ. Պոլոսցի և Կիւրեղ, խոկ Հռովմայ Եպիսկոպոսին անունն իսկ չկայ (Տես Գերոյիշեալ աղբիւրը, Գիրք Ե., Գլ. Ը.): Խոկ Եփեսոսի Ս. ժողովոյն մէջ Եպիսկոպոսաց զուլս նստած է Կիւրեղ Աղեքսանդրացին. Ո՞ւր է Հռովմայ Եպիսկոպոսին զահերէցութիւնը. Բայց եթէ զահերէցութիւն ալ լինէր, միթէ գերազանց և տարբեր իշխանութիւն կընա՞ր համարուիլ:

Կեսարիա այն ատեն հպատակած էր կոստանդնուպոլիսոյ Պատրիարքին, ինչ որ կեսարիայէ էր կոստանդնուպոլիսէ առնուած ըսելու իրաւունք կը կազմէ: Եթէ նամակը զրողներ ըստ կամս պատմութիւն կազմելու չափ յետսամիտ չուզէ կարծել, ասկէ զատ իմաստ չի կրնար տալ այն խօսքերուն: Թող որ լաւագոյն քննադատներ նամակին պատճէնը վաւերական չեն ընդունիր, նկատելով որ Փարագեցին չունի, և նոյն իսկ ռՀռովմայք բառին վրայ գրչութեան սիրալանք մը կը տեսնեն, ինչպէս խօսից կարզը և բոլոր պատմազրաց միաձայնութիւնը կը հաստատեն:

Տերակին հեղինակը Լատինացնել ուզած է Յովիան Մանդակունի կամ թողիկոսն ալ, որուն համար կը զրէ: ռՀալածանաց ատեն որ հինգերորդ դարուն մէջ սոսկալի հետեանքներ ունեցան ի Հայս, Քրիստոսը ուրացող Ազգայիններուն հրամայեց որ ի Հռովմ երթալով Պեարոսէն, որ այն ատեն Սուրբ Լեռն մեծ Քահանայապեան էր, իրենց արձակումը ընդունին: Բայց Յովիան Մանդակունի Կաթողիկոսի Դրւնոյ Մայր Եկեղեցւոյ քարոզին մէջ ո՛չ Հռովմայ անուն կայ և ո՛չ ալ Լեռնի անուն: Եթէ և Պետրոսը յանձնին Լեռնի վերակենդանացեալ կարծէ, բայց տակաւին Լեռն ալ չի գտներ Մանդակունիին ատեն, զի Լեռն 461ին մեռած էր, և Մանդակունուոյ տաենաբանութեան ժամանակ 485ին ուրիշ երկու ևս աթոռակալներ անցած էին, և Փելիքս Գ. Հռովմայեցին էր այն աւուր Հայրապեան Հռովմայ աթոռոյն վրայ: Սակայն պատմական ճշդութիւններ Հայ Եկեղեցւոյ հակառակորդին համար անհրաժեշտ պահանջներ չեն: Մանդակունիի խօսքը կը սկսի այս ընդհանուր սկզբունքով (Ղագ. Փարապ., էջ 556-557) թէ Շիստ իւրաքանչիւր ախտից բժիշկըն յայտնի են և պատրաստ, և կը շարու նակէ, «Մաքսաւորները տարէք Մատթէոս Աւետարանչին և Զաքէոսին, պոռնիկները պոռնիկ կնոյ» որ այսօր դուստը է Քրիստոսի, աւազակները դրախտաբաց աւազակին, ուրացողներն ալ, կ'ըսէ, արքայութեան դռնապանին և փակալին՝ Պետրոսին: Հռետորական արուեստի ձև մըն է տարէքաը, և Պետրոսի և ուրացելոց յարաբերութիւնն այն է, ինչ որ Զաքէոսի մաքսաւորին և բոլոր մաքսաւորաց, աշակովմեան աւազակին և բոլոր աւազակաց, Աւետարանական պոռնիկին և բոլոր պոռնիկներու յարաբերութիւնը, ո՛չ իշխանութեան և ո՛չ մեծութեան նշանակ, այլ մեղսակից լինելով ապաշխարութեամբ արդարանալու նմանութիւն: Պետրոս ալ ուրացաւ, կ'ըսէ Մանդակունին, բայց ապաշխարութեամբ արդարացաւ. ուրացեալներ երթան Պետրոսէ օրինակ առնեն և իրենք ալ ապաշխարութեամբ արդարանան: Զաքմանք է որ սմանց գրչին տակ խօսքերը այդշափ կրնան խեղաթիւրուիլ:

(Մնացեալը յաջորդիլ՝ 3)

ՄԱՂԱՐԻԱ ՊԱՏՐԻԱՐՔ ՕՐՄԱՆԵԱՆ